

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի էներգետիկ անցումը ապահովող ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿ ԹԻՎ 9681-AM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՒ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջեւ Ստորագրման օրվա դրությամբ կնքված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ: Վարկառուն եւ Բանկը սույնով համաձայնում են հետեւյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն համաձայնագրի հավելվածում) կիրառվում են սույն համաձայնագրի նկատմամբ եւ դրա մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, սույն համաձայնագրում մեծատառով օգտագործված հասկացություններն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն համաձայնագրի հավելվածում դրանց վերագրված իմաստները:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել 40,000,000 ԱՄՆ դոլար գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ սույն համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար:

2.02. Վարկառուն կարող է Վարկի միջոցներն առհանել սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV բաժնի համաձայն: Վարկային հաշվից բոլոր առհանումները պետք է Բանկի կողմից մուտքագրվեն Վարկառուի կողմից նշված եւ Բանկի համար ընդունելի հաշվին:

2.03. Վարկառուի կողմից վճարման ենթակա Միանվագ կոմիսիոն վճարը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%):

2.04. Վարկառուի կողմից վճարման ենթակա Պարտավորավճարը հավասար է տարեկան Վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսին (0.25%):

2.05. Տոկոսադրույքը Ելակետային տոկոսադրույքն է՝ գումարած Լողացող սպրեդը, կամ այնպիսի տոկոսադրույք, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ համաձայն Ընդհանուր պայմանների 3.02 «ե» բաժնի:

2.06. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը և հուլիսի 15-ը:

2.07. Վարկի մայր գումարը մարվում է սույն համաձայնագրի հավելվածի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի նպատակների եւ ԲԾՄ ծրագրի ամսով իր պարտավորությունը: Այդ նպատակով Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրն իրականացվի Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի, սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի եւ Ծրագրային համաձայնագրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման լրացուցիչ դեպքերը կազմված են հետեւյալից.

ա) Ծրագիրը փոփոխվել եւ (կամ) կասեցվել է այնպես, որ Բանկի կարծիքով էապես եւ բացասաբար ազդի Վարկառուի՝ Ծրագրի նպատակներն իրագործելու կարողության վրա. եւ

բ Ծրագիրն իրականացնող մարմնի օրենսդրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն փոփոխվել, կասեցվել, ուժը կորցրած է ճանաչվել, չեղյալ է հայտարարվել, կամ դրանից հրաժարվել են այնպես, որ դա, Բանկի կարծիքով, բացասաբար եւ էականորեն կազդի Ծրագիրն իրականացնող մարմնի՝ Ծրագրի նպատակներն իրագործելու եւ (կամ) Ծրագրային համաձայնագրի

շրջանակներում իր պարտավորությունները կատարելու կարողության վրա:

4.03. Արագացման լրացուցիչ դեպքը կազմված է հետեւյալից՝ մասնավորապես, որ տեղի ունենա սույն համաձայնագրի 4.01 բաժնում նշված որեւէ դեպք եւ Բանկի կողմից դեպքի մասին Վարկառուին ծանուցելուց հետո երեսուն (30) օր ժամանակահատվածում շարունակվի:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու լրացուցիչ պայմանները կազմված են հետեւյալից, մասնավորապես՝

ա) Օժանդակ համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել, կատարվել եւ հանձնվել է Վարկառուի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի անունից եւ պարտադիր իրավաբանական ուժ ունի Վարկառուի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի համար՝ դրա պայմաններին համապատասխան. եւ

բ) Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից ընդունվել է Բանկի համար ընդունելի Գործառնական ձեռնարկ:

5.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը Ստորագրման ամսաթվին հաջորդող հարյուրութսուներորդ (180) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

6.01. Վարկառուի ներկայացուցիչը դրա Ֆինանսների նախարարությունն է:

6.02. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակով՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան փողոց 1

Երեւան, 0010

Հայաստանի Հանրապետություն. եւ

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքս՝

374-11-800132

6.03. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակով՝

ա) Բանկի հասցեն է՝

Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկ

Էյչ փողոց 1818, Հս.Արմ.

Վաշինգտոն, ԿՇ, 20433

Ամերիկայի Միացյալ Նահանգներ. եւ

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Ֆաքս՝

1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՅՎԱԾ Է Ստորագրման ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ում կողմից՝ _____

Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ ՀՀ ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2024 թվականի օգոստոսի 8

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ

Ում կողմից՝ _____

Լիազորված ներկայացուցիչ

Անուն՝ Կարոլին Գեգինատ

Պաշտոն՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի ղեկավար

Ամսաթիվ՝ 2024 թվականի օգոստոսի 6

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումն էլեկտրահաղորդման ցանցում եւ ընդլայնել էլեկտրահաղորդման ընկերության առեւտրային կենսունակությունը:

Ծրագիրը ԲԾՄ ծրագրի փուլ է եւ կազմված է հետեւյալ միջոցառումներից.

Արդյունքային ոլորտ 1. Էլեկտրահաղորդման ցանցում ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրման ապահովում

Աջակցության տրամադրում հետեւյալի համար.

ա) ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ, ներառյալ, ի թիվս այլնի, գոյություն ունեցող էլեկտրական բաշխիչ կայանների հիմնանորոգում, տրանսֆորմատորների, մարտկոցների, քսայուղերի եւ պաշտպանիչ ռելեների փոխարինում եւ կառավարման շենքերի վերանորոգում.

բ) գործառնական բարելավումներ՝ էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի արդյունավետությունը եւ հուսալիությունը բարձրացնելու համար, ներառյալ, ի թիվս այլնի, ՍԿԱԴԱ հաղորդակցության եւ ավտոմատացման համակարգի իրականացման ավարտ՝ էներգետիկ համակարգի հեռահար դիտարկելիությունը եւ կառավարելիությունը բարելավելու նպատակով. եւ

գ) i) մեծածախ էներգետիկ շուկայի հետագա ազատականացում, ii) Վարկառուի հաղորդման ցանցի զարգացման տասնամյա ծրագրի պարբերական թարմացում. եւ iii) ՀԸԳՀ-ին համապատասխանեցված էներգետիկ նոր օրենսդրության ներդրում:

Արդյունքային ոլորտ 2. Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության ընդլայնում

Աջակցության տրամադրում հետեւյալի համար.

ա) ՀԾԿՀ-ին՝ սակագնային նոր մեթոդաբանություն ներդնելու հարցում, որն էներգետիկ բնագավառի ՊՁ-ների համար ապահովում է պատշաճ եկամուտներ եւ բարելավում է եկամուտների կանխատեսելիությունը.

բ) ԲԷՑ-ին՝ վարկային վարկանիշ ստանալու հարցում.

գ) ԲԷՑ-ին՝ առևտրային ֆինանսական գործարքների փորձնական ծրագիրն իրականացնելու հարցում.

դ) ԲԷՑ-ին՝ դրա կորպորատիվ կառավարման համակարգերը բարելավելու հարցում, այդ թվում՝ կորպորատիվ կառավարման լավ գործելակերպերի հետ կապված ԻՍՕ-ի հավաստագրեր ձեռք բերելու հարցում. եւ

ե) ԲԷՑ-ին՝ դրա կորպորատիվ կառավարումն արդիականացնելու հարցում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Ծրագրի կատարումը

Բաժին I. Կատարման մեխանիզմները

Ա. Ծրագրի կառույցները

1. Ծրագրի իրականացման ընթացքում Վարկառուն մշտապես կապահովի, որ ՏԿԵՆ-ը պատասխանատու լինի Ծրագրի ընդհանուր համակարգման համար եւ ՀԾԿՀ-ի հետ միասին պատասխանատու լինի համապատասխան քաղաքականության վերաբերյալ եւ կարգավորող որոշումների համար:

2. Ծրագրի իրականացման ընթացքում Վարկառուն մշտապես Բանկի համար բավարար մանդատով, կազմով եւ ռեսուրսներով կունենա Տեխնիկական աշխատանքային խումբ, որը՝ ա) կնախագահի ՏԿԵՆ-ը, բ) կազմված կլինի համապատասխան բոլոր մարմիններից, գ) պատասխանատու կլինի Ծրագրի համակարգման եւ Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար:

Բ. Օժանդակ համաձայնագիրը

1. Ծրագրի իրականացումը դյուրացնելու համար Վարկառուն Վարկի միջոցները հասանելի է դարձնում Ծրագիրն իրականացնող մարմնի համար Վարկառուի եւ Ծրագիրն իրականացնող մարմնի միջեւ օժանդակ համաձայնագրի շրջանակներում՝ Բանկի կողմից հաստատված պայմաններով (Օժանդակ համաձայնագիր):

2. Վարկառուն Օժանդակ համաձայնագրով սահմանված իր իրավունքներն այնպես է իրացնում, որ պաշտպանի Վարկառուի եւ Բանկի շահերը եւ հասնի Վարկի նպատակներին: Եթե Բանկն այլ բան չի համաձայնում, Վարկառուն չի զիջի, փոփոխի, չեղարկի Օժանդակ համաձայնագիրը կամ դրա դրույթներից որեւիցե մեկը կամ չի հրաժարվի դրանցից:

Գ. Ծրագրի գործողությունների ծրագիրը

1. Վարկառուն՝ ա) ապահովում է, որ Ծրագրի գործողությունների ծրագիրը, որը համաձայնեցվել է Բանկի հետ, իրականացվի նշված Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված ժամանակացույցին համապատասխան, Բանկի համար բավարար ձեով, եւ բ) վարում է քաղաքականություններ եւ ընթացակարգեր, որոնք պատշաճ են նշված Ծրագրի գործողությունների ծրագիրը Բանկի համար բավարար եղանակով եւ բովանդակությամբ դիտանցելու եւ գնահատելու հնարավորություն տալու համար:

2. Վարկառուն, առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության, էականորեն եւ (կամ) զգալիորեն չի փոփոխում, վերանայում Ծրագրի գործողությունների ծրագրի որեւէ դրույթ, հրաժարվում դրանից, չեղարկում կամ կասեցնում այն:

Բաժին II. Բացառված գործողությունները

1. Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը բացառի ցանկացած գործողություն, որը՝

Բանկի կարծիքով՝ հավանական է, որ շրջակա միջավայրի եւ (կամ) ազդակիր անձանց վրա զգալի բացասական ազդեցություններ կունենա, որոնք զգայուն, տարաբնույթ կամ աննախադեպ են. կամ

2. ներառում է հետեւյալի գնումները՝ ա) աշխատանքներ, որոնց գնահատված արժեքը կազմում է հարյուր տասնհինգ միլիոն դոլարին (\$115,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, բ) ապրանքներ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (\$75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, գ) ոչ խորհրդատվական ծառայություններ, որոնց գնահատված արժեքը կազմում է յոթանասունհինգ միլիոն դոլարին (\$75,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար, կամ դ) խորհրդատվական ծառայություններ, որոնց գնահատված արժեքը կազմում է երեսուն միլիոն

դրլարին (\$30,000,000) համարժեք կամ ավելի գումար մեկ պայմանագրի համար:

Բաժին III. Ծրագրի դիտանցումը, հաշվետվողականությունը եւ գնահատումը

Վարկառուն Ծրագրի յուրաքանչյուր հաշվետվություն Բանկին ներկայացնում է ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից մեկ (1) ամիս հետո՝ ներառելով օրացուցային կիսամյակը:

Բաժին IV. Վարկի միջոցների առհանումը

Ա. Ընդհանուր դրույթներ

1. Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթները եւ Հատկացումների եւ ֆինանսական տեղեկությունների նամակին համապատասխան՝ Վարկառուն կարող է առհանել Վարկի միջոցները՝ ա) ֆինանսավորելու Ծրագրի ծախսերը (ներառյալ հարկերը), Վարկառուի եւ (կամ) Ծրագիրն իրականացնող մարմնի ապահոված արդյունքների (Հատկացումների հետ կապված արդյունքներ կամ ՀԿԱ-ներ) հիման վրա, որոնք չափվում են կոնկրետ ցուցանիշներով (Հատկացումների հետ կապված ցուցանիշներ կամ ՀԿՑ-ներ), եւ բ) վճարելու Միանվագ կոմիսիոն վճարը բոլորը սույն «Ա» մասի 2-րդ կետի աղյուսակում սահմանված կարգով:

2. Հետեւյալ աղյուսակը սահմանում է Վարկի միջոցների առհանման յուրաքանչյուր կատեգորիա (այդ թվում՝ Հատկացման հետ կապված ցուցանիշները՝ ըստ կիրառելիության) (Կատեգորիա), Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Հատկացումների հետ կապված արդյունքները (ըստ կիրառելիության) եւ Կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝ Վարկի գումարների հատկացումը:

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
1) ՀԿՑ #1. Ավտոմատացված կառավարման ել թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանի հզորության տոկոսային ավելացում:	ՀԿԱ #1. Ավտոմատացված կառավարման ել թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանի հզորության տոկոս:	12,000,000	Ավտոմատացված կառավարման ել թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ընդհանուր ենթակայանի հզորության՝ Ելակետայինից յուրաքանչյուր տոկոսային կետով ավելացման համար 211,000 ԱՄՆ դոլար՝ մինչեւ ՀԿՑ-ի առավելագույն 12,000,000 ԱՄՆ դոլար հատկացումը: Ելակետը՝ 43%:
2) ՀԿՑ #2. Հաղորդման ենթակայանների ընդհանուր հզորության ավելացում ՄՎԱ կետով:	ՀԿԱ #2. Հաղորդման ենթակայանների ընդհանուր հզորության ավելացում ՄՎԱ կետով:	12,000,000	Հաղորդման կայանի հզորության յուրաքանչյուր ՄՎԱ կետով ավելացման համար 31,000 ԱՄՆ դոլար՝ մինչեւ ՀԿՑ-ի առավելագույն 12,000,000 ԱՄՆ դոլար հատկացումը: Ելակետը՝ 2,711 ՄՎԱ:
3) ՀԿՑ #3. Էներգահամակարգի պլանավորման, գործարկման եւ կարգավորման բարելավումներ:	ՀԿԱ #3.1. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը» (ԷԷՀՕ) հրապարակել է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի երկրորդ թարմացումը:	300,000	Վճարվում է ամբողջությամբ՝ իրագործվելուց հետո:

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
	ՀԿԱ #3.2. ԷԷՀՕ-ն հրապարակել է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի երրորդ թարմացումը: ՀԿԱ #3.3. Ազգային ժողով են ներկայացվել «Էլեկտրաէներգիայի մասին» եւ «Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի մասին» նոր օրենքները՝ համապատասխանեցված ՀԸԳՀ-ին, որոնցով սահմանվում են հաղորդման ցանցի օպերատորի եւ էներգիայի կուտակիչների ներդրումային գործունեության գործառույթները՝ ԵՄ չափանիշներին համապատասխան: ՀԿԱ #3.4. ՀԾԿՀ-ն՝ i) ունի հաստատված նվազագույն գործառնական կանոններ եւ պարտավորություններ՝ ցանցային անվտանգության վերաբերյալ, որոնք համապատասխանում են 2005.89/ԵԽ հրահանգին, եւ ii) հրապարակել է արտակարգ իրավիճակներում ԲԷՑ-ի կողմից անհամաչափությունների կառավարման հետ կապված չափանիշները:	300,000 900,000 500,000	
4) ՀԿՑ #4. Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման ուղղությամբ առաջընթաց:	ՀԿԱ #4.1. ՀԾԿՀ-ն սահմանել է, որ 35 կՎ եւ ավելի բարձր լարման էլեկտրաէներգիայի ցանցից սնվող խոշոր սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ	500,000	Վճարվում է ամբողջությամբ՝ իրագործվելուց հետո:

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
	կամ ընտրեն մատակարար: ՀԿԱ #4.2. i) ՀԾԿՀ-ն սահմանել է, որ 6/10կՎ եւ ավելի բարձր լարման էլեկտրաէներգիայի ցանցից սնվող խոշոր սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար, եւ ii) ՀԾԿՀ-ն ունի պատշաճ համալրված եւ լիովին գործող շուկայի դիտանցման գործառույթ: ՀԿԱ #4.3. ՀԾԿՀ-ն սահմանել է, որ էլեկտրաէներգիայի բոլոր խոշոր սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար՝ անկախ լարման մակարդակից: ՀԿԱ #4.4. ԲԷՑ-ը թարմացրել է հաղորդման ցանցի չափման ենթակառուցվածքը, որ հնարավոր դարձնի էլեկտրաէներգիայի հաղորդման բոլոր կորուստների ճշգրիտ հաշվառումը՝ մեկժամյա կտրվածքով: ՀԿԱ #4.5. ՀԾԿՀ-ն էականորեն կրճատել է էլեկտրաէներգիայի սպառման այն շեմը, որից բարձր էլեկտրականության մեծածախ սպառողները պետք է դառնան որակավորված սպառողներ ազատականացված մեծածախ շուկայում կամ	1,000,000 500,000 500,000 500,000	

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
	ընտրեն մատակարար:		
5) ՀԿՑ #5. Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ենթակառուցվածքի համար առետրային կապիտալի մոբիլիզացման ավելացում:	ՀԿԱ #5.1. ԲԷՑ-ի խորհուրդը հաստատել է 2024-2030թթ. ֆինանսավորման ռազմավարությունը եւ ճանապարհային քարտեզը: ՀԿԱ #5.2. i) ԲԷՑ-ը ներկայացրել է վերանայված մեթոդաբանությանը համապատասխանող եւ պատշաճ կադրային ապահովումն արտացոլող սակագնի հայտ, ներառյալ՝ տեխնիկական, ֆիդուցիար եւ շրջակա միջավայրի ու սոցիալական գործառույթները, եւ ii) ՀԾԿՀ-ն ընդունել է ԲԷՑ-ի Էլեկտրաէներգիայի նոր սակագինը՝ վերանայված մեթոդաբանությանը համապատասխան: ՀԿԱ #5.3. ԲԷՑ-ի կորպորատիվ կանոնագիրքը թարմացվել է, որ հնարավորություն տրվի պարտատոմսեր թողարկելու վարկավորման պատշաճ ընդլայնմամբ, եւ ԲԷՑ-ը վարկային վարկանիշ է ստացել կա՛մ ընկերության համար, կա՛մ որոշակի ապահովված պարտատոմսերի թողարկման համար: ՀԿԱ #5.4. ԲԷՑ-ն իրականացրել է առաջին առետրային ֆինանսավորման գործարքի փորձարկումը:	1,000,000 2,000,000 1,000,000	Ամբողջությամբ կվճարվի իրագործվելուց հետո:

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
		1,000,000	
ՀԿՑ #6. Առաջընթաց ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ:	ՀԿԱ #6.1. ԲԷՑ-ը ստացել է ԻՍՕ 9001: 2015 «Որակի կառավարման համակարգ» ստանդարտին համապատասխանության սերտիֆիկացում:	500,000	Ամբողջությամբ կվճարվի իրագործվելուց հետո:
	ՀԿԱ #6.2. ԲԷՑ-ը ստացել է ԻՍՕ 37001 «Հակակոռուպցիոն կառավարման համակարգեր» ստանդարտին համապատասխանության սերտիֆիկացում:	500,000	
	ՀԿԱ #6.3. ԲԷՑ-ը ստացել է ԻՍՕ 27001«Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր» ստանդարտին համապատասխանության սերտիֆիկացում:	400,000	
	ՀԿԱ #6:4. ԲԷՑ-ը ստացել է ԻՍՕ 14001: 2015 «Բնապահպանական կառավարման համակարգեր» ստանդարտին համապատասխանության սերտիֆիկացում:	500,000	
ՀԿՑ #7. ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման ուղղությամբ առաջընթաց:	ՀԿԱ #7.1. Խորհրդի՝ ռազմավարության սահմանման, կատարողականի նպատակների եւ դիտանցման, կառավարման, վերահսկողության եւ հսկողության դերը ԲԷՑ-ի հիմնադիր փաստաթղթերում եւ կանոնադրությունում համապատասխանում է Վարկառուի կորպորատիվ կառավարման կանոնագրքին:	500,000	Ամբողջությամբ կվճարվի իրագործվելուց հետո:

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
	ՀԿԱ #7.2. Ստեղծվել է խորհրդի առուփտի կամ առուփտի եւ ռիսկերի համատեղ հանձնաժողով՝ համալրված պատշաճ հմտություններ եւ փորձ ունեցող անձնակազմով եւ Վարկառուի կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխան տեխնիկական առաջադրանքով: ՀԿԱ #7.3. Ստեղծվել է խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրման եւ վարձատրության հարցերով հանձնաժողով՝ համալրված պատշաճ հմտություններ եւ փորձ ունեցող անձնակազմով եւ Վարկառուի կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխանող տեխնիկական առաջադրանքով: ՀԿԱ #7.4. Ստեղծվել է խորհրդի ներդրումային հանձնաժողով՝ համալրված պատշաճ հմտություններ եւ փորձ ունեցող անձնակազմով եւ Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխանող տեխնիկական առաջադրանքով: ՀԿԱ #7.5. ԲԷՑ-ի խորհրդում առնվազն երկու պաշտոն զբաղեցնում են խորհրդի անկախ անդամներ, իսկ խորհրդի անդամների առնվազն	500,000 500,000	

Կատեգորիա (այդ թվում՝ Հատկացումների հետ կապված ցուցանիշ՝ ըստ կիրառելիության)	Հատկացումների հետ կապված արդյունք (ըստ կիրառելիության)	Վարկի հատկացված գումար (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Հատկացումների հաշվարկման բանաձև (ըստ կիրառելիության)
	30 տոկոսն իզական սեռի ներկայացուցիչներ են:	500,000	
		2,000,000	
(8) Միանվագ կոմիսիոն վճար, որը պետք է վճարվի սույն համաձայնագրի 2.03 բաժնի համաձայն՝ Ընդհանուր պայմանների 2.05 «բ» բաժնի համաձայն]		100,000	
[(9) Տոկոսադրույքի առավելագույն շեմ կամ նվազագույն եւ առավելագույն շեմերի տարբերագին, որը պետք է վճարվի Ընդհանուր պայմանների 4.05 «գ» բաժնի համաձայն]			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ		40,000,000	

Բ. Առհանման պայմանները, առհանման ժամանակահատվածը

1. Չնայած սույն Բաժնի «Ա» մասի դրույթներին՝ որեւէ առհասարակ չի կատարվում՝

ա) Ստորագրման ամսաթվից առաջ ապահովված ՀԿԱ-ների հիման վրա՝ բացառությամբ նրա, որ մինչեւ \$5,321,000-ը չգերազանցող հանրագումարի չափով առհասարակները կարող են կատարվել ՀԿԱ #1-ի եւ ՀԿԱ #2-ի հիման վրա, որոնք իրագործվել են նախքան այդ ամսաթիվը, սակայն 2023թ. փետրվարի 3-ի օրը կամ դրանից հետո. եւ

բ) 1-7-րդ կատեգորիաների շրջանակներում որեւէ ՀԿԱ-ի համար, մինչեւ եւ եթե Վարկառուն Բանկի համար բավարար փաստարկներ չի ներկայացնում առ այն, որ ՀԿԱ-ն իրագործվել է:

2. Չնայած սույն բաժնի «Բ.1» մասի «բ» կետի դրույթներին՝ Վարկառուն կարող է առհասարակ գումար, որը չպետք է գերազանցի \$6,679,000 գումարը որպես կանխավճար՝ այնուամենայնիվ պայմանով, որ եթե ՀԿԱ-ները, Բանկի կարծիքով, չեն իրագործվել (կամ միայն մասամբ են իրագործվել) մինչեւ Փակման ամսաթիվը, ապա Վարկառուն այդ կանխավճարն անհապաղ փոխհատուցում է Բանկին՝ այդ մասին Բանկի կողմից ծանուցում ստանալուց հետո: Եթե Վարկառուի հետ այլ բան համաձայնեցված չէ, ապա Բանկը չեղարկում է այդ եղանակով փոխհատուցվող գումարը: Հետագա ցանկացած առհասարակ, որը որպես կանխավճար կպահանջվի որեւէ Կատեգորիայի շրջանակներում, կթույլատրվի միայն այնպիսի պայմաններով, որոնք Բանկը կսահմանի՝ ծանուցելով Վարկառուին:

3. Չնայած սույն Բաժնի «Բ.1» մասի «բ» կետի դրույթներին, եթե ՀԿԱ-ներից որեւէ մեկը Կատեգորիա (1), (2), (3), (4), (5), (6) եւ (7)-ի շրջանակներում չի ապահովվել մինչեւ այն ամսաթիվը, որը սահմանված է տվյալ ՀԿԱ-ի իրագործման համար (կամ ավելի ուշ ամսաթիվը, որը Բանկը սահմանել է՝ այդ մասին ծանուցելով Վարկառուին), ապա Բանկը կարող է Վարկառուին ծանուցելով՝ ա) թույլատրել Վարկի չառհանված միջոցներից այդպիսի ավելի

փոքր գումարի առհանումը, որն այդ ժամանակ հատկացված է եղել տվյալ Կատեգորիայի համար, որը Բանկի կարծիքով համապատասխանում է տվյալ ՀԿԱ-ի իրագործման չափին, եւ այդ ավելի փոքր գումարը պետք է հաշվարկվի սույն հավելվածի IV.Ա.2 բաժնում բերված բանաձեւի համաձայն, բ) մեկ այլ ՀԿԱ-ի ամբողջությամբ կամ մասամբ վերահատկացնել Վարկի միջոցները, որն այդ ժամանակ հատկացված է եղել տվյալ ՀԿԱ-ին, եւ (կամ) գ) ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել Վարկի միջոցները, որոնք այդ ժամանակ հատկացված են եղել տվյալ ՀԿԱ-ի համար:

4. Փակման ամսաթիվն է 2029 թվականի հունիսի 30-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հանձնառությամբ պայմանավորված աստիճանական մարման ժամանակացույց

Ստորեւ բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի Մայր գումարի մարման ամսաթվերը եւ դրանցից յուրաքանչյուրի ժամանակ վճարվելիք՝ Վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսը, որը վճարվում է յուրաքանչյուր Մայր գումարի մարման ամսաթվի դրությամբ (Վճարման մասնաբաժին):

Մայր գումարի մարման մակարդակ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Վճարման մասնաբաժին
Յուրաքանչյուր հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին Սկսած 2039 թվականի հունվարի 15-ից, ներառյալ 2049 թվականի հուլիսի 15-ը	5%

ԱՌԴԻՐ

Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ուղեցույց» Ընդհանուր պայմանների Առդիրի 6-րդ կետի նպատակներով նշանակում է «Արդյունքահեն ֆինանսավորման ժամանակ խարդախության եւ կոռուպցիայի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի վերաբերյալ ուղեցույց»՝ թվագրված 2012 թվականի փետրվարի 1-ով եւ վերանայված 2015 թվականի հուլիսի 10-ին:

2. «Ելակետ» ցանկացած ՀԿԱ-ի մասով նշանակում է համապատասխան թիվը կամ տոկոսը, որը սահմանված է սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV.Ա.2 բաժնում:

3. «Խորհուրդ» նշանակում է ԲԷՑ-ի խորհուրդը, որը ստեղծված է Վարկառուի 2001թվականի մարտի 7-ի «Էներգետիկայի մասին» օրենքի համաձայն, կամ դրա որեւէ իրավահաջորդ:

4. «Կատեգորիա» նշանակում է սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV.Ա.2 բաժնի աղյուսակում նշված կատեգորիա:

5. «ՀԸԳՀ» նշանակում է «Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» ԵՄ-ի եւ Վարկառուի միջեւ, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտին, որով Հայաստանի համար շրջանակ է նախատեսվում, ի թիվս այլնի, վերջինիս Էներգետիկ ոլորտի օրենսդրությունը եւ կարգավորող շրջանակը Եվրոպական միության հետ ներդաշնակեցնելու համար:

6. «Կորպորատիվ կառավարման կանոնագիրք» նշանակում է Վարկառուի կորպորատիվ կառավարման կանոնագիրքը, որը կցված է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 1769-Ա որոշմանը:

7. «Հատկացման հետ կապված ցուցանիշ» կամ «ՀԿՑ» տվյալ

Կատեգորիայի առնչությամբ նշանակում է նշված Կատեգորիայի հետ կապված ցուցանիշը, ինչպես սահմանված է սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV.Ա.2 բաժնի աղյուսակում:

8. «Հատկացման հետ կապված արդյունք» կամ «ՀԿԱ» տվյալ Կատեգորիայի առնչությամբ նշանակում է նշված Կատեգորիայի շրջանակներում արդյունքը, ինչպես սահմանված է սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV.Ա.2 բաժնի աղյուսակում, որի իրագործման հիման վրա նշված արդյունքի համար հատկացված Վարկի գումարը կարող է առհասնվել նշված IV բաժնի դրույթների համաձայն:

9. «ԷԷՀՕ» կամ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» նշանակում է ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 779-Ա որոշման համաձայն ստեղծված՝ Վարկառուի պետական մասնակցությամբ ձեռնարկությունը կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդ:

10. «Բանաձեւ» նշանակում է միջոց՝ հաշվարկելու համար ՀԿԱ-ների դիմաց հատկացումները, ինչպես որոշված է Բանկի կողմից սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի IV.Ա.2 բաժնի աղյուսակի համաձայն:

11. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է «Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմաններ՝ ՎՋՄԲ ֆինանսավորման համար, արդյունքահեն ծրագրի ֆինանսավորում»՝ թվագրված 2018 թվականի դեկտեմբերի 14-ով (վերջին անգամ վերանայված 2023 թվականի հուլիսի 15-ին):

12. «ԲԷՑ» կամ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» նշանակում է Վարկառուի փակ բաժնետիրական ընկերությունը, որը ստեղծվել է Կառավարության 1998 թվականի հուլիսի 20-ի թիվ 450 եւ 1999 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշումների համաձայն եւ գրանցված է Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում:

13. «Անկախ ստուգման գործակալ» նշանակում է երրորդ կողմ

հանդիսացող սուբյեկտ, որը պետք է ներգրավվի Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից՝ Ծրագրային համաձայնագրի Հավելվածի I.Բ.1 բաժնի համաձայն:

14. «Ստանդարտացման միջազգային կազմակերպություն» կամ ԻՍՕ նշանակում է 1947 թվականի փետրվարի 23-ին հիմնադրված միջազգային կազմակերպությունը, որը կազմված է ստանդարտացման ազգային մարմիններից՝ համաշխարհային առևտրի եւ համագործակցության խթանման համար մեծաթիվ ստանդարտներ մշակելու եւ հրապարակելու համար:

15. «ԻՍՕ 14001: 2015 «Բնապահպանական կառավարման համակարգեր» ստանդարտ» նշանակում է միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտ, որով սահմանվում են բնապահպանական կառավարման համակարգին ներկայացվող պահանջները, որը հրապարակվել է 2015 թվականի սեպտեմբերին՝ կատարված թարմացումներով:

16. «ԻՍՕ 27001: «Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր» ստանդարտ» նշանակում է միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտ, որով սահմանվում են տեղեկատվական անվտանգության կառավարման արդյունավետ համակարգին ներկայացվող պահանջները, որոնք հրապարակվել են 2022 թվականի հոկտեմբերին՝ կատարված թարմացումներով:

17. «ԻՍՕ 37001: «Հակակոռուպցիոն կառավարման համակարգեր» ստանդարտ» նշանակում է միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտ, որով սահմանվում են հակակոռուպցիոն կառավարման համակարգի ստեղծման, իրականացման, սպասարկման, ուսումնասիրման եւ բարելավման պահանջները, եւ ուղղորդում է տրամադրվում դրանց համար, որը հրապարակվել է 2016 թվականի հոկտեմբերին՝ կատարված թարմացումներով:

18. «ԻՍՕ 9001: 2015 «Որակի կառավարման համակարգ» ստանդարտ» նշանակում է միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտ, որով սահմանվում են որակի կառավարման պահանջները, որը հրապարակվել է 2015 թվականի

սեպտեմբերին՝ կատարված թարմացումներով:

19. «ԿՎ» նշանակում է կիլովոլտ:

20. «ԲԾՄ ծրագիր» նշանակում է Բազմափուլ ծրագրային մոտեցման ծրագիրը, որը մշակվել է՝ ավելացնելու համար վերականգնվող էներգետիկ կարողությունները Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի մասնակից երկրներում:

21. «ՏԿԵՆ» կամ «Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն» նշանակում է Վարկառուի նախարարությունը, որը պատասխանատու է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների համար, կամ վերջինիս ցանկացած իրավահաջորդ:

22. «ՄՎԱ» նշանակում է մեգավոլտ ամպեր:

23. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է Ծրագիրն իրականացնող մարմնի կողմից ընդունված ձեռնարկը՝ Ծրագրային համաձայնագրի Հավելվածի I.Բ.2 բաժնի համաձայն՝ Բանկի համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ դրանում կատարվող փոփոխություններով:

24. «Ծրագրի գործողությունների ծրագիր» նշանակում է Վարկառուի ծրագիրը՝ թվագրված 2024թ.ապրիլի 30-ով, եւ որին հղում է կատարվում սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Բ բաժնում եւ Ծրագրային համաձայնագրի Հավելվածի I.Գ բաժնում, Բանկի համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ դրանում կատարվող փոփոխություններով:

25. «Ծրագրային ծախսեր» Ընդհանուր պայմանների 2.03 եւ 7.04 բաժինների նպատակով նշանակում է, ի թիվս այլնի, այն ծախսերը, որոնք կատարում է Վարկառուն եւ (կամ) Ծրագիրն իրականացնող մարմինն իր բյուջետային հոդվածների համաձայն (կամ համանման այլ հոդվածների համաձայն, որոնց մասին Բանկին կարող է ծանուցվել ժամանակ առ ժամանակ), եւ Վարկային միջոցներից ֆինանսավորվող ծախսեր, սակայն բացառությամբ

Բացառված գործողությունների հետ կապված ծախսերի:

26. «Ծրագիրն իրականացնող մարմին» նշանակում է ԲԷՑ-ը:

27. «Ծրագիրն իրականացնող մարմնի օրենսդրություն» նշանակում է Վարկառուի՝ ԲԷՑ-ի հիմնադրման եւ գործունեության մասին օրենսդրությունը, մասնավորապես՝ 1998 թվականի Կառավարության հուլիսի 20-ի թիվ 450 որոշումը եւ 1999 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշումը:

28. «ՀԾԿՀ» կամ «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով» նշանակում է Վարկառուի կարգավորող հանձնաժողովը, որը ստեղծվել է եւ գործում է Վարկառուի 2003թ. դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-18 օրենքի համաձայն, կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

29. «ՍԿԱԴԱ» նշանակում է տվյալների հավաքագրման եւ կարգավարական կառավարման համակարգ:

30. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է այն երկու օրերից ավելի վերջինը, երբ Վարկառուն եւ Բանկը ստորագրել են սույն համաձայնագիրը, եւ այդ սահմանումը կիրառվում է Ընդհանուր պայմաններում «Վարկային համաձայնագրի օրվան» արվող բոլոր հղումների նկատմամբ:

31. «ՊՄՁ-ներ» նշանակում է պետական մասնակցությամբ ձեռնարկություններ:

32. «Տեխնիկական աշխատանքային խումբ» նշանակում է Վարկառուի խումբը, որը ստեղծվել է 2024թ. հունվարի 11-ին՝ սույն համաձայնագրի 2-րդ հավելվածի I.Ա.(2) բաժնի համաձայն:

33. «Ստուգման արձանագրություններ» նշանակում է Վարկառուի արձանագրությունները, որոնք համաձայնեցված են Բանկի հետ՝ թվագրված 2024թ. ապրիլի 30-ով եւ ներառված Գործառնական ձեռնարկում, որով սահմանվում են ՀԿՑ-ների/ՀԿԱ-ների ստուգման համար պահանջվող գործողությունները եւ մեխանիզմները, եւ որոնց հղում է կատարվում Ծրագրային համաձայնագրի Հավելվածի I.Բ. բաժնի 1-ին կետի «բ» ենթակետում: